

З У Б Ь Б Л А Б Г О У Б У Б У Л П Б Г Р А З У

孙少川 28-77 1853 6月11日 22

ՅԱՅՍՏԱՐՈՒԹՅԱՆ

Համանակիս պարագաներուն վրայօք, Օգոստավառ Ինքնակալին հրամանաւը մայրաքաղաքիս մէջ
և դուրսերը հրատարակուած:

(Օսմանեան և Պոռտուգալից կառավարութեանց մէջ քանի մը խնդիրներու վրայօք անհամաձայնութիւն ծագելով, Պոռտուգալ տէրութիւնը Բարձրագոյն Դրան հետ ունեցած պաշտօնական յարաբերութիւնները դադրեցուց, իւր դեսպանը մայրաքաղաքէս կամչեց և սկսաւ ծովէն և ցամաքէն մեծ պատրաստութիւնները ընելու՝ ինչպէս յայտնի է ամենուն։ Կայսերական տէրութիւնն ալ զգուշութեան և պաշտպանութեան համար՝ քանի մը զինուորական և ամբութեան պատրաստութիւններ ընելու ձեռք զարկաւ, որ արդէն թափվի և էժայի պաշտօնական լրագրութեան միջոցաւ ծանուցուած է։

Ուուսիս տէրութեան հետ եղած
այժմեան վէճին բուն պատճառը այս
է : Ուուսիս տէրութիւնը՝ Յունաց
եկեղեցիներուն և հոգեւորականնե-
րուն կրօնական արտօնութիւնները
տեսակ մը պայմանի կազել կուզէ , ո-
րուն Ռարձրագոյն Դուռը իրաւամբ
չի կրնար հաճութիւն տալ : Իսու ո-
րում , այս կրօնական արտօնութիւնն-
ները՝ բարեյիշտառակ Ջաթիհ Առւ-
թան ՈՒԵ հէմիկտէն շնորհուած և անկէ
ետեւ հետզհետէ յաջորդող Առւ-
թաններէն ընդունուած և հաստատ-
ուած են : (Օգոստափառ Խնքնակալն
ալ իւր մեծափառ նախնեաց բարձր
օրինակին հետեւելով , նմանապէս վա-
ւերացուցած և հաստատած է զա-
նոնք : Կայսերական տէրութեան ա-
սանկ ինքնին շնորհած վաղեմի արտօ-
նութիւնները աւրել ամենեւին մէկու
մը մոքէն անգամ անցած չէ : Ուստի
ասանկ հաստատուած բանի մը վրայօք
ինչպէս որ Ռարձրագոյն Դուռը բո-
լոր աշխարհի կրնայ ապահովութիւն
տալ , անանկ ալ Ուուսիս տէրութեան
վէճի նիւթ լրած կասկածները փարա-
տելու բաւական ապահովութիւն տա-
լէ ալ ետ կեցած չէ . և ըստ որում
տէրութեան մը հպատակ այսչափ մի-
լիոններէ բազկացեալ ազգի մը կրօնա-
կան արտօնութեանցը վրայօք օտար
տէրութեան մը հետ գանձադրութեան
ձեւով կամ զօրութեամբ կարգադրու-
թիւն մը ընելլ՝ հաճութիւն տուող
տէրութեան անկախութեանը և գե-
րագոյն իրաւանցը կը դպչի , ասանկ
կագագրութեան մը անհնար ըլլալը
կրկին և կրկին բարեկամաբար և ան-
կեզծութեամբ ծանուցուեցաւ անոր :
Բայց Ուուսիս տէրութիւնը՝ թէ և
ասանկ բանի մը վրայ այսչափ յամառիլ
հարկ չէր , իւր պահանջնունքէն ետ
չի կենալով , այս անգամ Աղոթաւիոյ
և Վալաքիոյ երկիրները առ ժամանակ-
եայ կերպով գրաւելու համար իւր
զօրքերը Բրութ գետէն ասդին ան-
ցուց , որնոր մեծ զարմանք պատճա-
ռեց կայսերական կառավարութեան :
Ուուսիս զօրաց սահմանագլուխէն աս-
դին անցնիլը հաստատեալ դաշնադրու-
եանց հակառակ ըլլալով , Կայսերական
կառավարութիւնը՝ տէրութեանց կո-
նոնին համեմատ , այս գործոյն դէմ
բոլղքեց . այսինքն ասանկ դաշնադրու-
թեանց հակառակ գործ մը չի կրնալ

ընդունիլը պաշտօնական ծանուցագր-
րով մը օսար տէրութեանց խմացուց :
Եւ օրովհետեւ տէրութեանց մէջ մէկ
մէկու ամբովղութիւնը և անկախու-
թիւնը պաշտպանելու համար՝ հաս-
տատեալ պայմանագրութեանց համա-
ձայն՝ տեսակ մը փոխագարձ երաշխա-
ւորութիւն կայ, այս տեսակ մեծ խըն-
գիր մը պատահած ժամանակը՝ անոնց
ամենուն ալ միտքը համեստը հաստատ-
եալ կանոն մըն է : Ուստի այս տէրութիւնը
յայտարարութիւն ըրեր է, թէ իր
բուն գիտաւորութիւնը կայսերական
տէրութեան հետ պատերազմ ընել է .
այլ Անդաւիս և Վալոքիս երկիրնե-
րը իբր գրաւ իր ձեռքը պիտի ունե-
նայ, մինչեւ որ իւր ուզածը կատար-
ուի : Վեծամեծ տէրութիւնները աս-
տիճան աստիճան՝ առանց բացառու-
թեան՝ բարեկամական նշաններ ցոյց
կուտան (Օսմաննեան տէրութեան . ա-
սանց մէջ Անդղիս և Գաղղիս տէրու-
թիւնները ծովային տէրութիւններ
ըլլալով, կայսերական կառավարութե-
պաշտպանողական և վատահացուցիչ
կերպով իրենց բարեկամութիւնը ի-
րօք յայտնեցին : Կայսերական կա-
ռավարութիւնն ալ յիշեալ տէրու-
թեանց հետ ըստ կանոնի խօսակցելով,
որ և է կերպիւ (Օսմաննեան տէրութե-
անկախութեանը և գերագույն իրա-
ւանցը վեաս բերելիք առաջարկութիւն
մը չկրնալընդունելուն համար՝ միա-
բանութեամբ սրոշեց, որ իր պաշտ-
պանութեանը համար՝ Դանուբի եզեր-
քը և Վախիկան Տաճկաստանի սահմա-
նագլուխները զինեալ կենայ մինչեւ որ
այս գործոյն ինչ ձեւի դաւնալիքը
հասկցուի : Աչա այս է Ուստիս տէ-
րութեան հետ ծագած վէճին բուն
պատճառը և գործերուն այժմեան վի-
ճակը : Կայսերական կառավարութիւ-
նը պէսք եղած ամեն միջացները, նաև
զօրաց, զինուց և ամրութեանց վերա-
բերեալ ամեն բաները ըստ արժանաւոյն
տնօրինելու և ՚ի գործ գնելու հոգ և
խնամք կը տանի կոր : Ուստի (Օսման-
նեան տէրութեան իւրաքանչիւր հպա-
տակաց պարտաւորութիւնն է, որ
հանգստութեամբ իրենց գործերուն
իրենց առոււտուրին և իրենց երկրա-
գործութենը զբաղին, և կայսերական
կառավարութեան կողմէն իրենց ինչ
հրաման ըլլայ նէ՝ անիկա կատարելու
ջանան :